



Primacy of the Armenian Apostolic Orthodox Church
of the United Kingdom and Republic of Ireland

His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

Saint Yeghiche Armenian Church Parish Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծով

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan

13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB

Registered Charity No 1173403

Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeoghiche.org.uk
www.styeoghiche.org.uk <https://www.facebook.com/StYeghiche>

SUNDAY BULLETIN

1: Today's Scripture Reading,

10th January 2021

Bulletin 02/2021

Fifth Day of Nativity

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ԵՔԲԱՅԵՑԻՆԵՐԻՆ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 12:17-27

Քանի որ գիտէք թէ յետոյ՝ երբ ուզեց ժառանգել օրհնութիւնը՝ մերժուեցաւ, թալէտ փնտռեց զայն արցունքով, որովհետեւ իր ապաշխարութիւնը անօգուտ եղաւ՝:

Արդարեւ դուք մօտեցած չէք շօշափելի լերան՝ որ կը վառէր կրակով, ո՛չ ալ մթութեան, խաւարին ու մրրիկին, եւ փողին շառաչին ու խօսքերուն ձայնին. զայն խողները խնդրեցին որ այդ խօսքը այլեւս չըսուի իրենց: (Արդարեւ չէին կրնար տոկալ այդ պատուերին. «Եթէ նոյնիսկ անասուն մը դպչի լերան՝ պիտի քարկոծուի»: Այնպէս ահարկու էր երեւոյթը՝ որ Մովսէս ըսաւ. «Մաստիկ կը զարհուրիմ ու կը դողամ»:) Բայց դուք մօտեցած էք Սիոն լերան, ապրող Աստուծոյ քաղաքին՝ երկնային Երուսաղէմին, բիւրաւոր հրեշտակներու համաժողովին, երկինքը արձանագրուած անդրանիկներու համախմբումին, Աստուծոյ՝ որ բոլորին Դատաւորն է, արդարներուն հոգիներուն՝ որոնք կատարելութեան հասած՝ են, Յիսուսի՝ որ նոր ուխտի միջնորդն է, եւ սրկուած արիւնին՝ որ կը խօսի Աբելի արիւնէն աւելի լաւ:

Զգուշացէ՛ք որ չմերժէք ան՝ որ կը խօսի ձեզի. որովհետեւ եթէ պատիժէ չխուսափեցան անոնք՝ որ մերժեցին երկրի վրայ Աստուծոյ պատգամները տուողը, ո՛րչափ աւելի մենք՝ եթէ երես դարձնենք երկինքէն խօսողէն: Այն ատեն անոր ձայնը շարժեց երկիրը, իսկ հիմա խոստացած է՝ ըսելով. «Անգամ մըն ալ պիտի շարժեմ. ո՛չ միայն երկիրը, այլ նաեւ երկինքը»: Այս «անգամ մըն ալ» խօսքը կը բացայայտէ շարժուած բաներուն փոփոխութիւնը՝ իբր շինուած բաներ, որպէսզի անշարժ բաները մնան հաստատուն:

The Epistle of St Paul to the Hebrews 12:17-27

Afterward, as you know, when he wanted to inherit this blessing, he was rejected. Even though he sought the blessing with tears, he could not change what he had done.

The Mountain of Fear and the Mountain of Joy

You have not come to a mountain that can be touched and that is burning with fire; to darkness, gloom and storm; to a trumpet blast or to such a voice speaking words that those who heard it begged that no further word be spoken to them, because they could not bear what was commanded: "If even an animal touches the mountain, it must be stoned to death." ^d The sight was so terrifying that Moses said, "I am trembling with fear." ^d

But you have come to Mount Zion, to the city of the living God, the heavenly Jerusalem. You have come to thousands upon thousands of angels in joyful assembly, to the church of the firstborn, whose names are written in heaven. You have come to God, the Judge of all, to the spirits of the righteous made perfect, to Jesus the mediator of a new covenant, and to the sprinkled blood that speaks a better word than the blood of Abel.

See to it that you do not refuse him who speaks. If they did not escape when they refused him who warned them on earth, how much less will we, if we turn away from him who warns us from heaven? At that time his voice shook the earth, but now he has promised, "Once more I will shake not only the earth but also the heavens." ^e The words "once more" indicate the removing of what can be shaken—that is, created things—so that what cannot be shaken may remain.

Our Aim;

St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

2: A short interpretation of the Scripture reading

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ԴՈՒԿԱՍԻ 1:39-56

Այդ օրերը Մարիամ կանգնեցաւ, փութալով գնաց լեռնակողմը՝ Յուդայի մէկ քաղաքը, մտաւ Չաքարիայի տունը եւ բարեւեց Եղիսաբէթը: Երբ Եղիսաբէթ լսեց Մարիամի բարեւը, երախան խայտաց անոր որովայնին մէջ. իսկ Եղիսաբէթ լեցուեցաւ Սուրբ Հոգիով, ու բարձրաձայն գոչելով ըսաւ. «Դուն օրհնեալ ես կիներուն մէջ, եւ օրհնեալ է որովայնիդ պտուղը: Այս ի՞նչպէս եղաւ, որ իմ Տէրոջս մայրը եկաւ ինձի. որովհետեւ ահա՛ երբ քու բարեւիդ ձայնը հասաւ ականջիս, երախան ցնծութենէն խայտաց որովայնիս մէջ: Երանի՛ անոր՝ որ հաւատացած է, որովհետեւ՝ պիտի կատարուին այն բաները՝ որոնք Տէրոջմէն ըսուեցան իրեն»:

Մարիամ ըսաւ. «Իմ անձս կը մեծարէ Տէրը,
եւ իմ հոգիս ցնծաց իմ Փրկիչ Աստուծոմովս,
քանի որ նայեցաւ իր աղախինին նուաստութեան. արդարեւ ահա՛ ասկէ ետք՝ բոլոր սերունդները երանելի պիտի կոչեն զիս,
որովհետեւ Հօգոր մեծամեծ բաներ ըրաւ ինձի: Անոր անունը սուրբ է,
եւ անոր ողորմութիւնը իրմէ վախճողներուն վրայ է՝ սերունդէ սերունդ:
Իր բազուկով զօրութիւն ցոյց տուաւ, ցրուեց ամբարտաւանները իրենց սիրտին երեւակայութեամբ:

Չօրաւորները իջեցուց իրենց գահերէն, ու բարձրացուց նուաստները:
Անօթիները լիացուց բարիքներով, եւ պարապ ճամբեց հարուստները:
Օգնութեան հասաւ իր Իսրայէլ ծառային, յիշելով իր ողորմութիւնը
ինչպէս ինք խոստացած էր մեր հայրերուն - Աբրահամի եւ անոր զարմին հանդէպ՝
յաւիտեան»:

Մարիամ անոր քով մնաց՝ զրեթէ երեք ամիս, ապա վերադարձաւ իր տունը:

The Holy Gospel of Jesus Christ according to Luke 1:39-56

Mary Visits Elizabeth

At that time Mary got ready and hurried to a town in the hill country of Judea, where she entered Zechariah's home and greeted Elizabeth. When Elizabeth heard Mary's greeting, the baby leaped in her womb, and Elizabeth was filled with the Holy Spirit. In a loud voice she exclaimed: "Blessed are you among women, and blessed is the child you will bear! But why am I so favoured, that the mother of my Lord should come to me? As soon as the sound of your greeting reached my ears, the baby in my womb leaped for joy. Blessed is she who has believed that the Lord would fulfil his promises to her!"

Mary's Song

And Mary said:
"My soul glorifies the Lord
and my spirit rejoices in God my Saviour,
for he has been mindful
of the humble state of his servant.
From now on all generations will call me blessed,
for the Mighty One has done great things for me—
holy is his name.
His mercy extends to those who fear him,
from generation to generation.
He has performed mighty deeds with his arm;
he has scattered those who are proud in their inmost thoughts.
He has brought down rulers from their thrones
but has lifted up the humble.
He has filled the hungry with good things
but has sent the rich away empty.
He has helped his servant Israel,
remembering to be merciful
to Abraham and his descendants forever,
just as he promised our ancestors."

Mary stayed with Elizabeth for about three months and then returned home.

Մեկնութիւն եւ պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱԲ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱԲ
Աւետիսի բարի մաղթանքով եւ աղօթքով՝
տ. Նշան քինյ.

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Նա, որ քեզանից է ծնուելու, սուրբ է եւ Աստծոյ Որդի կոչուի» (Դուկ. 1:35)

Քրիստոսով նորոգուած եղբայրներ եւ քոյրեր,

ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱԲ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱԲ. Այս մեծ Աւետիսով միմեանց ողջունում ենք ութ օր շարունակ: Ութ օր է Սուրբ Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնական շրջանը: Ութօրէքը Արարչութեան եօթ օրերի լրման՝ ութերորդ օրուայ, յարութեամբ մայրամուտ չունեցող օրուա մասին է պատմում:

Աստուած սահմանեց արարչութեան եօթ օրեր, իսկ Արարիչ Որդի Աստուած, մարդանալով շարունակում է արարչութիւնը՝ մարմին առնելով, փրկութեան համար խոնարհուելով երկնքից:

«Սէրդ Սիրով խոնարհեցար, ի փրկութիւն մեր մարմնացար»

«Դու, որ Սէրն ես, սիրով խոնարհուեցիր, մեր փրկութեան համար մարմնացար» (սբ. Ներսէս Շնորհալի, Ժամագիրք, Առաւօտեան ժամերգութիւն).

Ամենասուրբի ծնուելը, մարմնանալը, մարդանալը խորհուրդ է, Աստծոյ սիրոյ խորհուրդ, «որ յերկինս ես» բարձրում եղող Աստծոյ խոնարհումն է դէպի երկիր: Աստուածածնին հրեշտակն ասաց. **«Նա, որ քեզանից ծնուելու է, սուրբ է եւ Աստծոյ Որդի կոչուի»**: Ոչ թէ յետոյ սրբացող, այլ արդեն սուրբ էութեան մասին է խօսում, որ կար յաւիտեաններից առաջ, որ ստեղծել է ամէն բան, անգամ ժամանակը, եւ այժմ ժամանակի մէջ ծնում է կնոջից եւ դառնում մեզ պէս: **«Ձեզանից իւրաքանչիւրը թող խորհի այն, ինչ որ կայ Քրիստոս Յիսուսի մէջ, որը Աստծու կերպարանքով էր, բայց Աստծուն հաւասար լինելը յափշտակութիւն չհամարեց, այլ իր անձը ունայնացրեց՝ ծառայի կերպարանք առնելով»** (Փիլ. 2:5-6): Հպարտութեամբ Աստծոյ դէմ դուրս եկած օձակերպ սատանային յաղթելը եղաւ հպարտութեան հակադիր՝ խոնարհութեան միջոցով: Քրիստոսի մարմնանալն առաքեալն այդպէս է նկարագրում. **«...մարդկանց նման լինելով եւ մարդու կերպարանքով խոնարհեցրեց ինքն իրեն՝ հնազանդ լինելով մինչեւ մահ եւ այն էլ մահուան՝ խաչի վրայ»** (Փիլ. 2:7-8):

Աստծոյ մարդանալը մտքի համար միշտ չէ, որ մարսելի է: Աստծոյ՝ մարդու նման լինելը խոնարհում է այն աստիճան, որ մինչեւ հիմա շատերը Իր մէջ դժուարանում են տեսնել Աստծուն՝ անգամ Աստծոյ Որդի կոչելով հանդերձ:

Պատմում են, որ մեծահարուստ ընտանիքի աւագը երբ պէտք է դիմաւորեր պատերազմի պատճառով երկար գերութեան մէջ եղած իր եղբորը, նիհար, կեղտոտ, ցնցոտիաւոր գերիների մէջ չգտաւ եղբորը: Իր զինուորին մեռած կարծելով, փնտրտութից հիասթափուած երբ շրջուեց հեռանալու, հանկարծ իր անունը լսեց եւ ցածր ձայնը. «Ճանաչեցի՞ր ինձ»: Բոլորին անձ առ անձ քննած եղբայրը այդ վիճակի մէջ չէր ճանաչել իր հարազատ եղբորը, բայց երբ գտաւ, ուրախութեամբ, սիրով ու խնամքով գրկած տարաւ շքեղ կառքը:

Այդպէս մարդացած Յիսուսի մէջ շատերին դժուար է ճանաչել Քրիստոսին՝ Օծեալ Թագաւորին: «Դու ես ընծան, ընծայուողը եւ ընծան ընդունողը», -ասում է պատարագիչ քահանան: Պատահական չէ, որ եկեղեցու Հայրերը աւետարանական բարի Սամարացու կերպարի մէջ եւս Քրիստոսին են տեսնում, որ եկաւ փրկելու սատանայից թալանուած ու վիրաւորուած մարդուն, մեղքի վերքերից լուաց մկրտութեան ջրով, օծեց Սուրբ Հոգու միւռոնով եւ յանձնեց Եկեղեցու պանդոկը՝ խնամելու եւ հոգ տանելու մինչեւ Իր վերադարձը:

Ութօրէքի՝ արարչութեան նորոգման խորհուրդը մեզ էլ է յուշում Սուրբ Ծնունդը վերածելու մեր հոգեւոր նորոգութեան առիթի.

- Սրբացնել մեր կեանքը՝ յիշելով, որ մեր մկրտութեամբ մենք էլ Աստծո որդի եղանք.

- Խոնարհուած, խեղճ վիճակի մէջ կլինենք, թէ ուրիշին կտեսնենք, յիշենք Քրիստոսի՝ երկնքից խոնարհուելը եւ անասունների մտուրի մէջ դրուելը.

- Յիշել, որ ըստ Աւետարանի՝ խոնարհութեամբ ենք բարձրանում: Դրա համար խոնարհուենք՝ այլոց օգնելու, բարձրացնելու, խնամելու, բժշկելու համար, նրանց մէջ Քրիստոսին տեսնելով, մեր մէջ Քրիստոսին բնակեցնելով:

Սուրբ Ծնունդը մարդկութեանը օգնելու բարձրացնելու, բժշկելու, Աստծոյ որդի դարձնելով փրկելու համար էր:

ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱԲ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱԲ . ՁԵՉ ԵՒ ՄԵՉ ՄԵԾ ԱԲԵՏԻՍ

Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան

4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

By Rand Family for the soul of their Mother and Grandmother the late **ANAHID NAKASHIAN** who passed away on 20th December 2020 in Los Angeles USA, also for all the old and new deceased members of the **HAYEK, NAKASHIAN** and **RAND** Families.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Please Pray For Our Sick: Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

Ձեր ամեն տեսակի հոգևոր կարիքներուն եւ Խորհրդակատարութիւններուն՝ Տնօրինէի, հիւանդի այցելութեան, Սր Հաղորդութեան ստանալու եւ այլ խնդրանքներուն համար դիմեցէք Եկեղեցի 020 7373 8133, կամ ուղղակի հեռաձայնեցէք Հոգևոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեանին 07548 777 147:

ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or **020 7373 8133** or by emailing info@styeghiche.org.uk Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

Requiem Service (Hokehankisd)

For Requiem Service (Hokehankisd), please call the church office at **020 7373 8133**, or e-mail us your request to info@styeghiche.org.uk by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated. **Please remember our Church in your prayers.** *Your kind donations are gratefully accepted:*

ANNOUNCEMENT:

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the side entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk

St Yeghiche Parish Council appeals to all members for **prompt** payment of their **annual membership dues and generous donations**, thus saving your parish administrative and postage costs.

Please hand in your membership dues and donations to the members of the Parish Council at the side entrance desk of the Church. Alternatively please post your cheque to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques pay-able to: **“St Yeghiche Armenian Church”**. You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403. Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.